ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2019 թվականի հունիսի 20-ի N 27-2/27-2/10388-2019 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքոհիշյալ աշխատողներին 2019 թվականի սեպտեմբերի 3-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ *«Մասիսներ Սթայլ»* սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ուսումնական կենտրոն *«Գնումների էլեկտրոնային համակարգի ուսուցում»* թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար.

1) ***Կոմիտաս Հունանյան*** - ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Ստեփանյան*** - ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. ***Կոմիտաս Հունանյանի*** գործուղման մեջ գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ ***Արամ Գրիգորյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)*՝ գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Սույն կարգադրության 1-ին կետով գործուղված քաղաքացիական ծառայողներին գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի հուլիսի 01
ք. Հրազդան
N 103-Ա